



ԲԱԶՄԱՎԷՊ

Է. ՏԱՐԻ. ԹԻԻ 14.

1849

ՅՈՒՆԻՍԻ 15.

Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն

Ն Կ Ա Ր Ա Գ Ի Ր

Բամբաստող Տարդ :

ԲԱՄԲԱՍԱՆՔԻՆ է ուրիշի վրայ գէշ խօսիլ, թէ՛ տկարամտութենէ առաջ գայ և թէ՛ չարասրտութենէ : Չարասրտութեամբ բամբասողներէն աւելի են անոնք՝ որ ուրիշը կը բամբասեն՝ զիրենք ան պակասութենէն հեռու ցուցնելու համար, կամ ուրիշ խօսք չունենալով բերաննին՝ զբօսանքի համար բամբասանք կ'ընեն : Կան շատեր որ բամբասանքը խօսքին համեմը ու աղպղպեղը կը սեպեն . անանկ որ՝ թէ որ մէկը խօսակցութեանը մէջ մէկուն մէկալին անուանը դպչելու խօսք չխառնէ, համ հոտ չկայ խօսածին մէջը, կ'ըսեն : Կան մարդիկ որ երկու խօսքերնուն մէկ՝ Բամբասանք չըլլայ կ'ըսեն, ու ետեւէն բամբասանք մը կ'ընեն . Բամ-

բասանք չըլլայ՝ բայց ան մարդուն խօսքին հաւտալ չըլլար կ'ըսեն, ու խեղճ մարդը ստասաց կ'ընեն . Բամբասանք ընել չեմ ուզեր՝ բայց չեմ գիտեր որ ան մարդը ինչպէս շուտով մը հարըստցաւ կ'ըսեն, ու խեղճ մարդը գող կ'ընեն . Բմենքնիդ գիտէք, ըսելս բամբասանք չըլլար, ան մարդը ազահին մէկն է կ'ըսեն . ու թէ որ երկու մարդ գիտէր անոր ազահութիւնը՝ ամենուն առջին խեղճ մարդուն անունը կը կոտրեն : Ուրիշ վարպետ կերպ մըն ալ ունին բամբասողները լուծեան ձևով ամէն բան իմացընելու . Ինչ մարդն ալ շատ աղէկ մարդ է, բայց . . . կ'ըսեն ու կը թողուն . գնա ի՜նչ որ կ'ուզես իմացիր ան Բայցէն . ի՜նչ չար բանի վրայ էր խօ-

սակցութիւնը՝ ան բանին տէր կ'ընեն խեղճ մարդը :

Բամբասողը ընկերութեան մէջ ուրիշներուն ալ պատճառ կ'ըլլայ բամբասանքի . գորտերու ու ճպուռներու կը նմանի , որոնց մէկը սկսածին պէս կըռկուալու կամ ճրճուալու՝ ամէնքն ալ ետեւէն կը սկսին : Որ խեղճին անունը բերան առնելու ըլլան՝ փետտած հաւ կը դարձնեն . ու հասարակօրէն աղէկ մարդկանց անունը կը ծամծըմուի . վասն զի ինչպէս թռչունները պտուղին հասունը ու ամենէն ընտիրը կը կտցեն , բամբասողներուն սովորութիւնն ալ աս է , աւելի աղէկ ու արդիւնաւոր մարդկանց վրայ գէշ խօսիլ : Ինոր համար Ուիլիէօ կարգինալը մէկուն վրայ բամբասանք լսելու որ ըլլար , կ'ուզէր ան մարդը տեսնել , հարկաւ մեծ աղէկութիւններ պիտի ունենայ որ այդչափ կը բամբասուի , ըսելով : Ետուած մարդկանց լեզու տուեր է՝ մէկմէկու հետ կապակցութիւննին եւեցընելու համար . բամբասողը մարդիկ մէկմէկէ կը բաժնէ՝ մէջերնին խռովութիւն ձգելով :

Հատ անգամ բամբասողը՝ Ուրիշէն ասանկ լսցի կ'ըսէ . որպէս զի սուտ որ ելլէ ըսածը , կամ ծայրէն փնաս մը ելլելու ըլլայ , ինքը աղատի . բայց միշտ ինքն ալ պատմածին վրայ բան մը կ'եւեցընէ . ինչպէս ջուրը ինչ խողովակի մէջէն անցնի՝ անոր հօտը կ'առնէ , ասանկ ալ բամբասանքը բերնէ բերան անցնելով՝ ամենուն կըբէն մէյմէկ քիչ բան կ'առնէ : Եկը ան մարդուն վրայ կը նախանձի , կ'ուզէ անոր բաները վար զարնել , ինչ որ նախանձը կը թելադրէ՝ կ'աւելցնէ վրան . մէկալը ան մարդուն հետ ոխ ունի , ուրիշ կերպով ոխը չկըրնար առնել , ինչ որ ոխը կը թելադրէ՝ կ'եւեցընէ վրան . ասանկով որչափ բերնէ բերան անցնի , այնչափ կը մեծնայ բամբասանքը :

Բամբասանքը ինչպէս որ տկարամտութենէ և կամ չարասրտութենէ առաջ կուգայ , այսպէս ալ կամ մտքի տկարութեան կամ սրտի չարութեան

նշան է . բայց աս տարբերութեամբ՝ որ չարասրտութեամբ բամբասողը իր կիրքն ալ կը յայտնէ , ու իրեն ալ չարաչար կը փնասէ . մեղուի կը նմանի , որ ուրիշը խայթած ատենը , իր խայթոցը վերքին մէջը կը թողու , ու իր կեանքը կը կորսնցընէ : Բամբասողին ըսածը ախորժելի ալ ըլլայ մարդկանց , ինքը միշտ ատելի է . մէկուն համար բամբասող է որ ըսես , ամէնքը կը խրտին անկէց . մարդուս մեծ գովեստներուն մէկն է՝ բերանն ու ախանջը գոց ըլլալը բամբասանքի : Եւստոններուն մէկը շատ անգամ իր բարեկամին սեղանը գտնուելով , ու կերակուրներուն գէշութենէն ի զատ ամէն անգամուն բամբասանք լսելով , օր մը դարձաւ տանտիրոջը ըսաւ . Չոր հացով ուրիշներուն միտք ու տելէն ձանձրացայ :

*

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

4

Երբեք մը ընտրելու արեւն պէտք է զած գործը լիարժեք ըլլայ :

ՍԱՐԴՍ իրեն արուեստ մը ընտրելու ատեն՝ ինչուան այն խեղճութեանն ալ կընայ հասնիլ՝ որ օրուան ոգեպահիկը գտնելու համար ստիպուի ծառայական թշուառ վիճակին ետեւէ ըլլալ :

Երբեք է որ ծառայութիւնն ալ մարդկային ընկերութեան ամենահարկաւոր բան մը սեպուած է ամէն ատեն , բայց կ'ըսեմ ձեզի , սիրեցեալք իմ , որ միայն վերջին և անհրաժեշտ հարկաւորութեան ատենը՝ ծառայութեան ծանր շղթայովը ինքզինքնիդ կապէք . ամէն արուեստի մէջ մարդս իր ջանքովը կըրնայ առաջ երթալ . քիչ մարդ եղած է , չըսեմ ամենեւին , որ ծառայութեամբ փառաւորուած ըլլայ . վասն զի շատ ցած վիճակ ըլլալուն՝ կարծես թէ բարձրութեան փափաքն ալ և կամ յոյսը՝ չեն ունենար այնպիսիք : Եւ կը տես-